

ՓՈԽԱՆՑԱՅԻՆ ՄՈՒՐՀԱԿԸ ՀԱՅ ԽՈՋԱՅԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Շ. Լ. ԽԱՉԻԱՅԱՆ

Վարկավորման տարբեր ձևերը, կապված առևտրական գործարքների և դրամը մեկ վայրից մեկ այլ վայր ու երկրից երկիր փոխադրելու հետ, չին Ա-քեելքում գոյություն են ունեցել տակավին մ. թ. ա. երկրորդ հազարամյակի սկզբներին¹։ Դրանք ավելի լայն ծավալ են ստացել Բաբելոնում մ. թ. ա. V—IV դդ., երբ հրապարակ են իջել էգիբի և Մուռաշու գործարար տները, որոնք վարկավորում էին տարբեր առևտրականների, ինչպես նաև ղբաղվում բանկային ու վաշխառուական գործարքներով²։ Տնտեսական կյանքի զարգացման ու միջազգային ապրանքափոխանակության աշխուժացմանը զուգընթաց այդ բնագավառում ստեղծվել են ավելի կատարյալ ձևեր։ Միջնադարյան Իրանում և նրա հետ սնտեսապես կապված երկրներում շատ տարածված է եղել «չեկը» (բառը պարսկական ծագում ունի)։ Վաճառականը ճանապարհորդելիս իր դրամն ի պահ է տվել համաքաղաքացի դրամափոխներից մեկին, նրանից ստանալով համապատասխան փաստաթուղթ՝ չեկ։ Ուրիշ վայրում ներկայացնելով այդ չեկը իր բնակավայրի դրամափոխի հետ գործարքի մեջ եղող մի ուրիշ դրամափոխի, վաճառականն ստացել է իր հասանելիք գումարը, բնականաբար համապատասխան վարձատրություն տալով այդ գործարքը կատարողներին։

XI դարի բանաստեղծ Նասիր-ի խոսքովը, որը եղել է Հայաստանում և գրի առել իր տպավորությունները հարավային Հայաստանի քաղաքների մասին³, արևելյան երկրներում կատարվող մեծածախ խոշոր առևտուրը նկարագրում է հետևյալ կերպ. օտար երկրներից ժամանած վաճառականն իր բերած ապրանքը հանձնում է տվյալ քաղաքում բնակվող դրամափոխներից որևէ մեկին, ստանում է նրանից համապատասխան «չեկ» և դրանով գնումներ կատարում՝ ձեռք բերելով իրեն անհրաժեշտ ապրանքները։ Բոլոր այս գործարքները կատարելիս հնչուն դրամի փոխարեն գործածվում է միայն «չեկ»⁴։

Ձարդացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, մանուփանդ աշխարհադրական խոշոր հայտնագործություններից հետո, երբ եվրոպական առևտրական կապիտալը նոր շուկաներ հայտնագործեց և հնարավորություն ձեռք բե-

¹ Н. Б. Янковская, Клинописные тексты из Кюль-Тепе в собраниях СССР, М., 1968, стр. 35, 100—102.

² М. А. Дандамаев, Рабство в Вавилонии, М., 1974, стр. 40—41; М. А. Дандамаев, В. Г. Луконин, Культура и экономика древнего Ирана, М., 1980, стр. 222—223; A. Ungnad, Das Haus Egibi—AFO, Bd. 14, 1941, S. 57—64. S. Weingart, Das Haus Egibi in neubabylonischen Rechtsurkunden, B., 1939.

³ Իր «Սաֆար-նամե» ճանապարհորդությունների գրքի մեջ նա հիշատակում է հայկական Մարանդ, Խոյ, Բերկրի, Վան, Ոստան, Խլաթ, Բաղեշ (Բիթլիս), Արծն քաղաքները (نصیر بن خوسرو, Сафар-Намэ, М.—Л., 1933, стр. 38—39)։

⁴ «История стран зарубежной Азии в средние века», М., 1970, стр. 345.

րեց օվկիանոսային նորահայտ ճանապարհներով հաղորդակցվելու հեռավոր-արևելյան երկրների հետ, դրամափոխանակության և վարկավորման բնագավառում նկատվեցին նոր երևույթներ։ Դրամական միջոցների և աղնիվ մետաղների անբավարար քանակի պայմաններում առևտրական վարկը դարձավ փոխանակության զարգացման էական դորժոն⁵։

Առևտրական կամ վաճառականական վարկը հնարավորություն էր տալիս ընդարձակելու առևտրի ծավալը, մեծացնելու շրջանառության մեջ գտնվող ապրանքների քանակը։ Վաճառականները, վարկով ապրանք դնելու հնարավորություն ձեռք բերելով, արհեստագործական նշանավոր կենտրոններից լրացուցիչ քանակությամբ ապրանքներ էին դնում՝ այդ ճանապարհով մեծ շահով ընդարձակելով ապրանքափոխանակությունը ինչպես մի երկրի սահմաններում, այնպես էլ տարբեր երկրների ու աշխարհամասերի միջև։ Այսպիսով, առևտրական վարկի զարգացած տեսակները հանդիսանում էին ապրանքադրամական զարգացած հարաբերությունների ուղեկիցը, ուստի նրանց հանդես գալը առևտրի բնագավառում համարվում է առևտրական կապերի ամրապնդման, մշտակալության և կտրգավորվածության, առևտրական հարաբերությունների ոլորտում համընդհանուր իրավական նորմերի ձևավորման ցուցանիշ⁶։

Միջնադարյան Հայաստանում ևս հնագույն ժամանակներից սկսած կիրառվել են վաշխառության տարբեր դորժոններ, իսկ զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, երբ միջազգային ապրանքափոխանակության բնագավառում մեծապես ընդարձակվել է Դվինի, Կարինի, Երզնկայի, Անիի, Կարսի, Արծնի նաև Խլաթի, Վանի և հայկական ուրիշ քաղաքների դերն ու նշանակությունը, շատ ավելի լայն ծավալ են ստացել վաշխառությունը և առևտրական վարկի տարբեր տեսակները։ Վաշխառության մասին հետաքրքրական տեղեկություններ կան միջնադարյան հայկական մի շարք աղբյուրներում⁷։ Միջնադարյան տիպիկ վաճառական ու վաշխառու է եղել անեցի Տիգրան Հոնենցը, որը տեղ էր դարձել բազմաթիվ կալվածքների ոչ միայն դրանք գնելով իրենց նախկին տերերից, այլև բռնագրավելով անվճարունակ պարտապաններից, որոնք նրա մոտ գրավ էին դնում իրենց պատկանող տնիքը, կրպակները, այգիները և այլ կալվածքներ⁸։ Հայկական քարոզարարներից քաղված մի հատվածի մեջ, որ գրանցված է XIV դարի առաջին տասնամյակներում, հանդիպում ենք այսպիսի մի վկայության. «Իմաստուն վաճառականը յորժամ երկնից [ն] յառազակաց ի ճանապարհին, ոչ տանին ղգանձ»

⁵ А. Л. Хорошкевич, Кредит в русской внутренней и русско-ганзейской торговле XIV—XV веков («История СССР», 1977, № 2, стр. 125).

⁶ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 23, стр. 104—156.

⁷ Տե՛ս, օրինակ, «Տեառն Յովհաննու Մանգակունոյ հայոց հայրապետի մասը», Վենետիկ, 1860, էջ 63—70։

⁸ Պահպանվել է Տիգրան Հոնենցի ընդարձակ արձանագրությունը՝ փորագրված Անիում 1215 թ. իր կառուցած եկեղեցու պատին։ Այստեղ թվարկված են նրա կողմից եկեղեցուն նվիրված բազմաթիվ գանձագին (իր կողմից գնված) ինչպես և «գրավկնած» (այսինքն՝ իր մոտ գրավի դրված) կալվածքները (տե՛ս «Դիվան հայ վիճագրության», պրակ 1, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966, էջ 63; Н. Я. Марр, Ани, книжная история города и раскопки на месте городища, Л.—М., 1934, стр. 35. Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, стр. 278—281 և այլն)։

իրենանց ընդ ինքեանս, այլ տան ի փոխս զդունձս իւրեանց [յ]այնպիսի վաճառական, որ ունի յաշխարհի իւրեանց սուռն և զանձ և առնուն ի նմանէ ձեռագիր. և երթայ խաղաղութեամբ, և տանի ձեռագիր վաճառականին, և առնու զգանձ իւր ի տանէ նորա»⁹։ Այս տեղեկության հիման վրա կարելի է եզրակացնել, որ Հայաստանում որոշակի զարգացում են ապրել զրամի փոխանակության և փոխադրության գործարքները։ Դժբախտաբար, այդ ժամանակաշրջանից մեզ չեն հասել արխիվային փաստաթղթեր, պարտամուրհակներ, վարկային գործարքների մասին գրանցումներ, որոնց միջոցով հնարավոր լիներ պարզել վարկի տարբեր ձևերի զարգացման աստիճանը միջնադարյան Հայաստանում։ Վիճակը միանգամայն փոխվում է XVI դարի վերջերից սկսած, մասնավորապես XVII—XVIII դդ.։ Հին և նոր Զուղայի, Նախիջևանի շրջանի առևտրական կենտրոնների (Ագուլիս, Ցղնա, Շոռոթ և այլն), Երևանի, Գանձակի, Շիրվանի և Անդրկովկասի այլ հայաշատ բաղաձայնների հայ վաճառականները այդ շրջանում իրենց ձեռքում են կենտրոնացնում Իրանի արտաքին առևտուրը ինչպես Եվրոպայի, այնպես էլ Հնդկաստանի ու հեռավորարևելյան երկրների հետ։ Հայ խոջայական կապիտալի ներկայացուցիչները առևտրական հենակետեր են ստեղծում Ֆրիպինյան կղզիներում, Ինդոնեզիայում, Հնդկաստանում, Հնդկաչինում, Ցեյլոնում, Հաբեշտանում, Միջին Ասիայում, արաբական երկրներում, Թուրքիայում, Ռուսաստանում, Եվրոպական բազմաթիվ երկրներում (հատկապես Իտալիայում ու Հոլանդիայում) և նույնիսկ սկսում են նոր աշխարհի՝ Ամերիկայի հետ առևտուր անելու փորձեր կատարել¹⁰։

Բնականաբար, հայ խոջայական կապիտալի միջավայրում լայն կիրառություն պետք է գտնեին ու զարգանային առևտրական վարկի տարբեր ձևեր։ Այդ են վկայում մեզ հասած գրավոր բազմաթիվ աղբյուրները։

Մեր առջև դրված հարցի պարզաբանման համար արժեքավոր փաստեր կան գրանցված ստորև բերվող աղբյուրների մեջ (թվարկումը կատարում ենք ժամանակագրական հերթականությամբ)։

1. Կոստանդ Զուղայեցու «Վասն նորահաս մանկանց և երիտասարդաց վաճառականաց խրատ» (կոչված նաև «Աշխարհաժողով») աշխատությունը, շարադրված է 1685 թ.։ Նոր Զուղայում։ Օգտագործել ենք Մաշտոցի անվան Մատենադարանում 10704 համարի տակ պահվող ձեռագիրը։

2. Տեր Դավթի որդի Հովհաննես Զուղայեցու 1682—1693 թթ. Իրանում, Հնդկաստանում, Նեպոլում և Տիբեթում գրված «Հաշվետվածքը»։ Ձեռագիրը պահվում է Լիսաբոնի ազգային գրադարանում 7970 համարի տակ։ Մատենադարանում կա այդ հաշվեմատյանի մանրաթափափներ և լուսանկարպատճենը¹¹։

⁹ Н. Я. Марр, Сборник притч Вардана, СПб., т. II, стр. 284.

¹⁰ Ջուռաճայ խոջայական կապիտալի տնտեսական կապերի մասին հետաքրքիր տեղեկություններ է գրանցել Զուղայի առևտրական ուսումնարանի ղարապետ Կոստանդ Զուղայեցին։ 1685 թ. շարադրված իր նշանավոր «Աշխարհաժողով» աշխատության մեջ (տես Մաշտոցի անգ. Մատենադարան, ԱՆՈ. № 10704, էջ 26—28ա) նա մեկ անգամ էլ ասիական ու Եվրոպական բոլոր այն երկրները է առևտրական կենտրոնները, որոնց հետ հայ վաճառականները տնտեսական կապերի մեջ են գտնվել։

¹¹ Լ. Խաչիկյանի և Հ. Փափազյանի աշխատասիրությամբ այդ բնագիրը հանձնված է ապագաբուհյան։ Օգտագործել ենք դրա մեքենագիր օրինակը։

3. Շահվելու որդի Սարհադի հաշվեմատյանը, գրանցված 1712—1718 թթ. Իրանում, Ռուսաստանում, Հոլանդիայում (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 6241)¹²,

4. Եղիա Մուշեղյանի նամակները, հաշվետվումարից արված քաղվածքները և նրա անձնական գործերի մեջ պահվող այլ փաստաթղթեր, որոնք ընդգրկում են 1711—1725 թթ.: Սրանք պահվում են «Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվի (Архив внешней политики России—АВПР) «Ռուսաստանի կապերը Հայաստանի հետ» ֆոնդում¹³,

5. Նազարեթի որդիներ Հարություն, Աղազար և Մանուկ լալարյանների առևտրական ընկերության «Ռուզնամայ» (օրագիր) կոչվող հաշվեմատյանը, որ կազմել է Հարությունը 1741—1759 թթ. Սպահանում, Ռեշտում, Աստրախանում, Մոսկվայում և Պետերբուրգում¹⁴,

6. Հետաքրքրական նյութեր կան Բրիտանական թանգարանի (այժմ՝ Բրիտանական գրադարան) Lansdowne 1047 և 1048 համարների տակ պահվող հայերեն 320 փաստաթղթերի մեջ, որոնք պարտամուրհակներ, փոխանցագրեր, վարկային տարբեր բնույթի փաստաթղթեր, կտակներ և նման այլ գրություններ են, շարադրված XVIII դարի առաջին կեսի ընթացքում՝ Նոր Զուղայում, Սուրաթում, Մադրասում, Կալկաթայում, Բասրայում և այլ առևտրական կենտրոններում ու խոշոր քաղաքներում: Մատենադարանում պահվում է այդ փաստաթղթերի ժողովածուի մասրաժապավենը և լուսանկար պատճենը¹⁵,

7. «Աստրախանի հայոց դատաստանագիրքը»¹⁶, որի մի քանի բաժինները, հատկապես շորորոդ գլուխը՝ «Վասն սանադի», հինգերորդը՝ «Վասն գրաւութեան» և, մասնավորապես, տասնհինգերորդը՝ «Վասն բարաթի», պարունակում են մեր թեմային առնչվող հետաքրքրական նյութեր, որոնց մեջ առկա են նաև պարտամուրհակների և վարկային գործարքների մի շարք օրինակելի ձևեր:

Հիմնականում վերոհիշյալ աղբյուրներն են, որ հնարավորություն են տալիս ուսումնասիրելու վարկատվության այն տարատեսակները, որոնք կի-

¹² Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1978, № 2, էջ 93—108.

¹³ Տե՛ս «Եղիա Կարենցու դիվանը», նյութեր Մերձավոր Արևելքի և Անդրկովկասի պատմության: Առաջաբանը և ծանոթագրությունները պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի, Նրևան, 1968.

¹⁴ Մաշտոցի անվ. Մատենադարան, արխիվային բաժին. լալարյանների ֆոնդ, թղթապանակ № 101, գործ № 123, վավերագիր № 1.

¹⁵ Այս փաստաթղթերի մասին տե՛ս A catalogue of the armenian manuscripts in the British Museum. By Frederic Cornwallis Conybeare, London, 1913, pp. 352—353. Ս. Տեր Մ. Գրիգորյան, Հայկական հին ձեռագիրներ Լոնդոնի Բրիտանական թանգարանում, «Բաղմավեպ», 1913, էջ 5—7. 1746 թ. անգլիացի ադմիրալ Գրիֆինը Հնդկական օվկիանոսում բռնադրավեց իսպանական մի ընկերության պատկանող Սանտա Կատարինա անունով առագաստանավը, որը վարձել էին մի քանի հայ վաճառականներ Բասրայից Կալկաթա նամփորդելու նպատակով: Հայերը 1751 թ. Լոնդոնում անգլիական պետության դեմ դատ բացեցին, պահանջելով վնասի հատուցում: Ի նպաստ իրենց դատի մեջտեղ բերեցին վերոհիշյալ փաստաթղթերը: Դատավարությունից հետո առաջին լորդ Լանդսդաուն ձեռք բերեց այս փաստաթղթերը և ապա նվիրեց Բրիտանական թանգարանին:

¹⁶ «Դատաստանագիրք Աստրախանի հայոց», աշխատասիրությամբ Յ. Գ. Պողոսյանի, Նրևան, 1967, էջ 8ԻԲ.

րառվում էին հայ խոջայական կապիտալի ներկայացուցիչների կողմից XVII դարի վերջերից մինչև XVIII դարի սուրճին հիսուն տարիների ընթացքում: Այդպիսի ձևերից ամենօրյա կիրառության մեջ էր գտնվում պարզ պարտամուրհակը, կոչված սանադ կամ թամասուկ, իր երկու տարատեսակներով՝ ժամկետավոր (մեկ ամիս, մեկ տարի, հինգ տարի և այլ ժամկետներով) և անժամկետ («երբ որ ուզէ՝ շահն ու մայէն տամ...»), որոնք տրվում էին տարբեր պայմաններով (տարեկան 6 տոկոս շահից սկսած մինչև 25 տոկոս):

Փոխանցային մուրհակը հայկական աղբյուրներում հիշատակվում է ղմէի ավաք, ավաք-ավաքագիր կամ բարաթ-բարաթագիր բառ-տերմիններով: Աստրախանի հայոց դատաստանագրքում փոխանցողրի էությունն այսպես է բացատրված (տալիս ենք աշխարհաբար թարգմանությամբ). «Բարաթ կամ բարաթագիր է կոչվում պարտավորության այն փաստաթուղթը, որով մի անձնավորություն (փոխառուն-տրասատը) մեկ ուրիշից (փոխատուից-տրասանտից) դրամ է փոխ վերցնում, որպեսզի մի այլ վայրում ինքը կամ իր փոխարենն մեկ ուրիշը (փոխավճարը) կատարի վճարումը փոխատուին կամ նրա կողմից լիազորված անձնավորությանը (փոխապահանջին—ռեմիտենտին)»¹⁷:

Փոխանցողրի ուսումնասիրության համար մի քանի տասնյակ նմանատիպ փաստաթղթերից ընտրում ենք մեկը, որը կաղմված է համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներով և որոշակի արժեք է ներկայացնում նաև այն առումով, որ որպես փոխառու այստեղ հանդես է գալիս հնդկահայ նշանավոր հասարակական գործիչ Շահամիր Շահամիրյանը: Փոխանցողրի տարբեր հատվածների քննարկումը դյուրացնելու համար նրա բաղկացուցիչ մասերը անջատել ենք միմյանցից հերթական համարանիշերով, որոնք դրված են յուրաքանչյուր հատվածի սկզբում, փակագծերի մեջ: Ահա այդ փաստաթղթի բնագիրը.

(1) Սուրբանումի որդի Շամիրս, (2) Ըսպահան, (3) զմէի սվաֆ վեռի (4) ողորմած հոգի Մարգարի որդի պարոն Ավետէն, (5) չամէն այ մին դգար բոուփի, որ կեսն այ են (500) ըոուփի: (6) Բարաթս տվի, որ աստուծով ներֆոյ րաբեղէն խինգ ամիս վաղայ, (7) Մադրասումն, (8) ողորմած հոգի Գավութխանի որդի պարոն Ռհանջան[ն], պարոն Մկրտումն (9) մապլազ ԱՌ (1000)–ին՝ աւկար բոուփի տայ (10) յիշեալ պարոն Ավետին (11) կամ ուր օրդնուն: (12) Եթէ վաղիցն յետ և յառէջ տան՝ ֆի Աճ (100)–ին ամսէն երեմփայ բուուփի մուպաբ հասապ լինի: (13) Բարաթս բ գրեցի մին մագբուն, որ մնովն որ տայ՝ միսին հուֆմն բաթիլ լինի: (14) Բարաթիս մապլաղն րիվն անլա (1746)–էն քալթայ (անհասկանալի բառ) յինֆ առած ռալամ իսանելէ խալչին ջահաան այ: Գրեցալ րիվն փոֆր անլր, աղամ ժե-ումն (1747, մայիսի 5):

(16) Նագարէրի որդի Աղագարս վկայ եմ
(կնիք)

Դիլանջէ որդի Ստեփանս վկայ եմ
(կնիք)¹⁸

¹⁷ Նույն տեղում, էջ 172:

¹⁸ Բրիտանական գրադարան, № 1047, էջ 177: Փաստաթուղթը իրավական ուժ ունեցող պատճեն է, հաստատված 5 վկաների կողմից, որոնք ստորագրություններով ու կնիքներով հաստատել են, որ «Սլավատու ասլին համեմատ այ» (այսինքն՝ պատճենը բնագրից չի տարբերվում):

Այժմ անցնենք փոխանցագրի այս օրինակի համարակիր բաղկացուցիչ մասերի քննությանը, ըստ անհրաժեշտության նյութ վերցնելով մեր ձեռքի տակ ելող մի քանի տասնյակ նմանօրինակ փաստաթղթերից.

1. Փոխանցային մուրհակները, անխտիր, սկսվում են փոխառուի հայրանվան ու անվան հիշատակումով: Հաճախ որպես փոխառու հանդես են գալիս երկու, նույնիսկ երեք և ավելի անձինք: Օրինակ, «Մենք Մինասի որդի էմնիազս, Սէթաղէ որդի Գրիգորըս» կամ՝ «Մենք Մուքէլի որդի Պետրոսըս, Հակոբջանի որդի Ոհանջանս, Ավետի որդի Ոհաննէսըս» և այլն¹⁹: Երբեմն անուն-հայրանունից բացի տրվում է նաև փոխառուի (փոխառուների) ազգանունը կամ մականունը, ծննդավայրի անունը: Օրինակ. «Խութլիկէնց Ծատուրի որդի պարոն Սիմոն»²⁰, «Խալդարէնց պարոն Յովան աղայ»²¹, «Նշխարար Յովանէս»²², «Ֆրանկ Իվան Դանելիչ»²³ և այլն:

2. Այս տեղում նշվել է փոխատվության գործարքի վայրը, տվյալ դեպքում՝ Սպահան: Բրիտանական գրադարանում պահվող փաստաթղթերի մեծ մասը գրված է Սպահանում, ավելի ճիշտ՝ միջնադարյան Իրանի մայրաքաղաքի հայկական թաղամաս Նոր Զուղայում: Բազմաթիվ փոխանցագրեր էլ կնքված են Բասրայում, Շամախիում, Աստրախանում, Մոսկվայում, Կալկաթայում, Սուրաթում և այն վայրերում, ուր գործել են հայ խոջայական կապիտալի ներկայացուցիչները:

3. Այս տեղը հատկացված է դրամական գործարքի տեսակը հասկանալու համար: Փոխանցագրով ստացված գումարը տարբեր անուններով է հիշվում փաստաթղթերի մեջ:

Աստրախանի դատաստանագրքում «բարաթ» (մուրհակ) տերմինն է գործածվում: Նույն տերմինը հաճախ գործածվում է նաև Սպահանում կնքված փաստաթղթերի մեջ, ինչպես նաև մեր կողմից քննարկվող պարտամուրհակի հաջորդ տողերում: Սակայն ջուղահայ վաճառականների միջավայրում ստեղծված փաստաթղթերի մեծամասնության մեջ, հիմնականում, հանդիպում ենք «ավաք» բառի հետ զուգորդվող «զմէի ավաք»²⁴ բառ-տերմինին, որն, ըստ երեւոյթին, պարսկա-հնդկական ծագում ունի և նշանակում է երաշխավորված մուրհակ: Հովհաննէս Զուղայեցու մոտ հաճախ հանդիպում ենք «յընդվի» և «յընդիավան» տերմիններին: «Հնդվի» էին կոչվում դեռևս XIII դարից Հնդկաստանում կիրառվող դրամի փոխատվության ու փոխադրության գործառնությունները, որոնցով վաճառականները կատարում էին վարկային ապառիկ գործարքներ և անդրամ հաշվարկներ²⁵:

19 Նույն տեղում, էջ 57, 106:

20 Հ. Լազարյանի հաշվեմատյան, էջ 109:

21 Նույն տեղում, էջ 61:

22 Նույն տեղում, էջ 24:

23 Շահվելու որդի Սարհադի հաշվեմատյան, Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 6241, էջ 3բ, 6ա:

24 Կան դեպքեր, երբ «զմէի ավաքի» փոխարեն ուղղակի դրված է լինում «զմէի բարաթ», ուստի հավասարության նշան է դրվում այդ երկու նույնիմաստ տերմինների միջև:

25 К. З. Ашрафян, Феодализм в Индии, М., 1977, стр. 128: Լոսդոնյան փաստաթղթերից մեկը, որ կազմված է ավաքագրերի նման և նույն պայմաններով, կնքված հայ վաճառականների և հնդիկ լուծայափոխի (սառաֆի) միջև, կոչված է հենց «հընդվի» («Աղայջանի որդի Մկրտումս Դաթայ յինք առի սառաֆ Ունուի Զանդ Խողալ Զանդէն ութն խէրուր

4. Այս հատվածում տրվում է փոխատուի կամ պարտատիրոջ անուն-հայրանունը: Մեր օրինակում փոխատուն «ողորմած հոգի Մարգարի որդի պարոն Ավետն» է, ուրիշ փաստաթղթերի մեջ որպես փոխատու հանդես են գալիս մեկից ավելի անձինք, որոնք եղել են կա՛մ գործընկերներ, կա՛մ էլ տնտեսապես կապված վաճառականներ:

5. Այնուհետև տրվում է փոխ առնված դրամի շափը, նախ՝ ամբողջ գումարը, ապա նաև այդ գումարի կեսը (թյուրիմացություններից խուսափելու համար):

Փոխ վերցված և վճարվելիք (տե՛ս 9-րդ կետ) դրամի տեսակը, հաճախ նաև որակը, նույնպես պարտադիր ձևով նշվում է²⁶: Քննարկվող օրինակում ստացվել է ոռուփի և վճարվելու է դարձյալ «արկաթ ըռուփի»: Տարբեր փոխանցային մուրհակներում հանդիպում ենք «Մադրասի սքայ ոռուփի», «Մադրասի սքայ արասի», «աֆղոնքի արասի», «Պասրու (Բասրայի) ըռայից թուման», «հուն», «ղօլօթայ», «տուկատ», «տուկատ կորէնթ», «մանէթ», «կօպէկ», «գուլդի» (բաղմիցս) և բազմաթիվ այլ դրամական միավորների²⁷:

6. և 7. Փոխանցագրի կարևորագույն հատվածներից այս երկուսով նշվում է փոխ վերցված դրամի վճարման վայրն ու ժամանակը՝ պարտամուրհակը ստորագրելուց որքան ժամանակ հետո և որտեղ է փակվելու հաշիվը: Սպահանում կնքված վերոհիշյալ պարտամուրհակի մարումը կատարվելու է Մադրասում՝ գործարքը կատարելու օրվանից հինգ ամիս հետո: Հինգ ամսվա պայմանը կրկնվում է համարյա բոլոր այն մուրհակներում, որոնք կնքված են Սպահանում, Հնդկաստանի (մասնավորապես Բենգալիայի) քաղաքներում՝ վճարումը կատարելու պայմանով: Բասրայից Բենգալիա (գրվում է «Բանկալայ») ժամկետը մեծ մասամբ նույնպես 5 ամիս է, Բասրայից Մադրաս՝ 3 ամիս²⁸ կամ 61 օր²⁹, Սպահանից Բասրա՝ նույնպես 61 օր³⁰, Ամստերդամից Վենետիկ, ապա Բասրա 7 ամիս³¹, Մոսկվայից Ամստերդամ՝ 3 ու կես ամիս (105 օր)³², Դաքայից Կալկաթա՝ 15 օր³³ և այլն: Այս ցանկը կարելի է ընդարձակել մի քանի անգամ: Բոլոր տվյալները գալիս են ապացուցելու, որ վճարման ժամկետը սահմանվում է տվյալ վայրի հեռավորության և ցամաքային ու ծովային ճանապարհների վիճակի, ճանապարհորդության հնարավոր միջոցների հաշվառումով: Երբ պարտամուրհակի վճարման վայրը մոտ է (Դաքա—Կալկաթա),

ըռուփի արկաթի, որ կէսն է դճ (ըռուփի) արկաթի: Հընդվիս տվի գնաց Կալկաթայ, ներքոյ թարեղեն ժե (15) օր վաղայ լուսահոգի աղայ էլիադի որդի սահիպ աղայ Միլասն տայ սառաֆ Պոտունմալ ըոսուպ Չանդի...» (Բրիտանական գրադարան, № 1047, էջ 116):

²⁶ Տարբեր երկրների դրամական միավորների տեսակների, հաճախ նաև կշռի, արժեքի և այլ նման հարցերի մասին նշված աղբյուրներում այնքան առատ ու ճշգրիտ տեղեկություններ կան, որ կարող են նյութ դառնալ հատուկ դրամագիտական ուսումնասիրության:

²⁷ Բրիտանական գրադարան, № 1047, էջ 49, 81, 82, 133, 145, 173, 185, 251, № 1048, էջ 20 և այլն:

²⁸ Նույն տեղում, էջ 49:

²⁹ Նույն տեղում, էջ 215, 275:

³⁰ Նույն տեղում, էջ 82:

³¹ Նույն տեղում, էջ 251:

³² Շահվելու որդի Սարադի հաշվեմատյան, էջ 3բ, 6ա, 6բ և այլն:

³³ Բրիտանական գրադարան, № 1047, էջ 116:

ժամկետը ընդամենը 15 օր է սահմանված, իսկ, օրինակ, Ամստերդամ—Բասրա հրթուղու դեպքում՝ 7 ամիս: Փոխանցազրի ժամկետի որոշման այս ձևը միակը չէ: Բազմաթիվ պարտամուրհակների մեջ ժամկետի հատվածը այլ կերպ է ձևավակերպված: Վճարելու որոշակի օրերի կամ ամիսների քանակ նշելու փոխարեն այդ կարգի փաստաթղթերում ասվում է, որ վճարումը կատարվելու է այսօրինչ նավը այս ինչ վայրը հասնելուց կամ տվյալ մուրհակը փոխավճարին ներկայացնելուց 11, 21 կամ էլ 31 օր հետո: Օրինակ, Մոսկվայից Ամստերդամ վճարումը կատարելու համար որոշ դեպքերում 105 օր ժամկետի փոխարեն սահմանված է տեղ հասնելուց 31 օր հետո³⁴, ինչպես նաև Մոսկվայից Շամախի և Աստրախանից Շամախի («որ գնա Շամախի՝ երեսուն ու մին օր վաղա») ³⁵, իսկ Շամախուց Աստրախան՝ 21 օր («որ գնամ Հաշտարխան քսան ու մին օր վաղա») ³⁶: Սպահանից Բասրա կամ Բենգալիայի քաղաքներ դրամի փոխանցման համար ևս, մեծ մասամբ, սահմանված է ժամկետ 21 օր տեղ հասնելուց կամ փաստաթուղթը ցույց տալուց հետո. «Բարաթին տեսանելէն քրսանմին օր վաղայ»³⁷, «որ գնայ Պասրայ տեսնելէն յետ ԻԱ (21) օր վաղայ»³⁸, «ջութամն վեր կայ Ա ամիս վաղայ»³⁹, «յետ ջութամին վեր կալէն ԺԱ (11) օր վաղայ»⁴⁰ և այլն:

Պատահում են ոչ մեծ քանակությամբ պարտամուրհակներ՝ տրված «բի վաղայ», այսինքն առանց ժամկետի սահմանման⁴¹: Այդ կարգի պարտամուրհակ ստորագրողները պարտավորվում են շահ վճարել ոչ թե որոշակի ժամանակ անցնելուց հետո, այլ հենց անմիջապես պարտամուրհակի գրանցման օրից սկսած: Այդ պայմանով 1746 թ. «Սաֆարի կողակից» և Ստեփանոսի մայր՝ Մարիամ տատիկ անունով մի կին դրամ է փոխ վերցրել երկու տարբեր անձնավորություններից: Մուրհակում գրված է. «Բարաթս տվի բի վաղայ, Մադրասումն ... իմ ... որդի պարոն Ստեփանն կամ ուր օրդնին (լիազոր ներկայացուցիչ) ... խէրուրին ամսէն զ (3) փայ մուղաթովն բարաթս ինչ վախտ խասանէ՝ տան...»⁴²: «Բի վաղայ» տիպի պարտամուրհակները պարզ պարտամուրհակների տարատեսակներից են, որոնց առանձնահատկությունը կայանում է նրանում, որ փոխառուն պարտավորվում է ոչ թե ինքը վճարել վերցրած գումարը, այլ այդ պարտավորությունը փոխանցում է ուրիշ երկրում գտնվող իր հարաշատին:

8. Այս հատվածում տրվում են փոխավճարի կամ փոխավճարների անունահայրանունները, երբեմն լրացուցիչ մանրամասնություններով (ծննդավայրը, ազգանունը, մականունը և այլն):

9. Այնուհետև նշվում է վճարվելիք գումարը: Տվյալ դեպքում ստացված ու վճարվող գումարը նույնն է՝ 1000 ռուբլի: Սակայն կան պարտամուրհակներ, որոնց մեջ 5-րդ հատվածում գումարը նշված է դրամական մեկ միավորով, իսկ

³⁴ Շահվելու: որդի Սարհադի հաշվեմատյան, էջ 3ր:

³⁵ Եղիա Կարնեցու դիվանը, էջ 306:

³⁶ Նույն տեղում, էջ 315:

³⁷ Բրիտանական գրադարան, № 1047, էջ 276, 289:

³⁸ Նույն տեղում, էջ 196:

³⁹ Հովհ. Զուղայեցու հաշվեմատյան, էջ 8:

⁴⁰ Նույն տեղում, էջ 223:

⁴¹ Նույն տեղում, էջ 204:

⁴² Բրիտանական գրադարան, № 1047, էջ 173, հմմտ. նաև էջ 176:

9-րդ հատվածում նաև այլ տվյալ երկրում գործածվող միավորով: Այդ կարգի պրանցումների շնորհիվ է, որ հնարավոր է լինում որոշել տարբեր երկրների դրամական միավորների ճշգրիտ համաչափությունները:

10. Նշվում է փոխապահանջի անուն-հայրանունը: Երբեմն որպես փոխապահանջ հանդես են դալիս մի քանի անձինք:

11. Ամենուրեք, որպես պարտադիր կանոն, նշվում է նաև, որ ժամկետը լրանալուց հետո փոխապահանջի բացակայության դեպքում վճարումը կատարելու է «ուր (այսինքն՝ իւր) օրդնին», այսինքն լիազորված անձնավորությանը, որը պետք է ունենար հատուկ լիազորագիր, որ կոչվում էր օրդնագիր⁴³:

12. Փոխանցագրի այս հատվածում արձանագրվում է փոխատվության բուն պայմանը: Քանի՞ տոկոս է շահ վճարվելու ժամկետանց մուրհակի համար և հակառակը՝ որքա՞ն է զեղչվելու ժամկետից շուտ վճարելու դեպքում: Փոխանցային մուրհակների մեծամասնության մեջ շահի տոկոսը «հարիւրին ամսէն կէս», այսինքն տարին 6 տոկոս է որոշված⁴⁴: Շահամիրյանի քննարկվող պարտամուրհակում և մի քանի տասնյակ այլ փաստաթղթերում և հաշվեմատյանային գրանցումների մեջ շահը 0,75 տոկոս է որոշված: «Հարյուրին ամսենը երեք փայ» կամ «հազարին ամիսը հե (75)» կամ «հարիւր ուսիին ամիսը ժբ (12) անա», այս բոլորը տարբեր ձևերով տոկոսի նույն չափն են նշում՝ ամիսը 0,75 տոկոս կամ տարին 9 տոկոս: Կան ոչ մեծ քանակությամբ փաստաթղթեր, որոնցում ավելի բարձր շահ է սահմանված: Լոնդոնյան մի փաստաթղթում, օրինակ, գրված է. «Եթէ վաղիցն հետ և հառէչ տայ, ֆի խէրրին մնովն մուղաթ հապս լինի», այսինքն ամիսը 1 տոկոս կամ տարին 12 տոկոս⁴⁵:

Ամիսը 0,5 տոկոս շահով տրվող փոխանցագրերի ճնշող մեծամասնության մեջ որպես փոխառու, փոխատու, փոխավճար և փոխապահանջ հանդես են գալիս տնտեսական գործունեությամբ միմյանց հետ սերտ կապված, հաճախ միևնույն աղաների տարբեր վայրերում գտնվող գործակատարներ հանդիսացող վաճառականները: Պարտամուրհակների մեջ, որքան էլ դրանք որպես պաշտոնական փաստաթուղթ գրված լինեն սահմանված ձևով, երբեմն հանդիպում ենք արտահայտությունների ու ակնարկների, որոնք հաստատում են այս փաստը: Բերենք մի քանի օրինակ: Ըստ Հարություն Լազարյանի հաշվեմատյանի, բաղմիցս դրամ կամ ապրանք են ուղարկում Ամստերդամում գտնվող Մաթոսի որդի Ավետը և Աստվածատուրի որդի Մարգարը, որոնք կոչվում են մեռ պարոն Ավետ, մեռ Մարգար և այլն⁴⁶: Լոնդոնյան փաստաթղթերից շատերի մեջ ևս կան տվյալներ դրամական գործարքներ կատարողների ազգակցական և առևտրական սերտ կապերի մասին:

Տարբեր փաստեր համագրելով՝ հնարավորություն ենք ստանում եզրակացնելու, որ «զմէի ավաք» կոչվող փոխանցագրերը հայ խոջայական կապիտալի ներկայացուցիչների համար եղել են կարևոր մի միջոց առևտրական ծա-

43 «... Յանձնարարական գիր, որ աշխարհաբարիւ կոչեմք օրդնագիր. այրն այն նույնով օրդնագրաւ կարիցէ պահանջել ղգրամ բարաթին ի փոխառուէն», — ասված է Աստրախանի հայոց դատաստանագրքում, էջ 175:

44 Այսպես են, օրինակ, Լոնդոնյան փաստաթղթերից 36, 78, 81, 82, 90, 96, 100, 104, 105, 107, 109 և բաղմաթիվ այլ էջեր:

45 Բրիտանական գրադարան, № 1047, էջ 56:

46 Հ. Լազարյանի հաշվեմատյան, էջ 105, 106:

վալուն իրենց գործունեությունը կարգավորելու, ըստ անհրաժեշտության մի-մրյանց վարկավորելու, շահած դրամը առևտրական ընկերությունների Սպա-հանում նստող իրենց աղա-պարոններին հասցնելու համար: Որոշակի քանա-կությամբ դրամ տալով որևէ ջուղայեցի վաճառականի, փոխատուն մի որոշ ժամանակ իր շրջանառու միջոցներից դուրս էր բերում որոշակի մի գումար, որը կարող էր նրան միջին հաշվով ամիսը 0,5 տոկոս շահ բերել և հակառակը, փոխառու-վաճառականը ստանալով այդ գումարը, ակնկալություն ուներ շա-հել ամսական առնվազն 0,5 տոկոսով, իսկ հաջող առևտրական գործարք կա-տարելով՝ գուցե և շատ ավելի մեծ շահով: Փոխատուն շահում էր, որովհետև անվտանգ ու ապահով մի վայրից մեկ ուրիշ վայր էր փոխադրում որոշակի քա-նակությամբ դրամ, փոխառուն շահում էր՝ հնարավորություն ձեռք բերելով ընդարձակել առևտրական իր գործունեությունը՝ դրամական նոր միջոցներ դնելով շրջանառության մեջ: Այսօրվա փոխատուն վաղը կարող էր դառնալ ու դառնում էր փոխառու և հակառակը: Այդ է պատճառը, որ ջուղայեցի հայ վա-ճառականների միջև փոխանցադրով դրամական գործարքներ կատարելիս, ժամկետանց վճարումների համար շահի նվազագույն չափ էր սահմանված ամ-սական 0,5 կամ տարեկան 6 տոկոս:

Քննարկվող 12-րդ հատվածում խոսք կա ոչ միայն ժամկետանց, այլև ժամկետից շուտ կատարվող վճարումների մասին («եթէ վաղիցն յետ և յառէջ տան...»): Սպահանից Կալկաթա, օրինակ, դրամ փոխադրելու համար օրինա-կան ժամկետ էր սահմանված 5 ամիս: Բայց, ըստ երևույթին, լինում էին դեպ-քեր, երբ բարեհաջող ճամփորդությունն ավարտվում էր ավելի կարճ ժամկե-տում, ուստի փոխապահանջը հնարավորություն էր ունենում պարտամուրհա-կը ժամկետից շուտ ներկայացնելու փոխավճարին: Այդպիսով նա իրավունք էր ձեռք բերում լրացուցիչ գումար ստանալու (մեկ ամիս շուտ ներկայացնելու դեպքում ամբողջ գումարի 0,5 տոկոսի շահով): Այս պայմանը դրամի շրջանա-ռությունն արագացնելու կարևոր խթան էր հանդիսանում:

Այսպիսով, ինչպես տեսանք, ժամկետանց փոխանցագրերի ղեկավար մասը տրվում էր ամսական 0,5 կամ տարեկան 6 տոկոս շահով: Սակայն իրենց քա-նակով ավելի մեծ թիվ են կազմում ամսական 0,75 (տարեկան 9) տոկոս շա-հով տրված պարտամուրհակները: Մեր ձեռքի տակ գտնվող այդ կարգի փաս-տաթղթերի մեծ մասը կազմված է Սպահանում կամ Հնդկաստանում: Դրանք հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ շահի այս տոկոսով էին կալի-մրվում այն փոխանցագրերը, որոնց մեջ փոխառուի դերում հանդես էին գալիս նույն խոջայական միջավայրին պատկանող այն անձինք, որոնք դրամի կարիք ունեին ոչ թե առևտրական ամենօրյա իրենց գործունեությունը հաջողությամբ շարունակելու համար, այլ անձնական կարիքների, պետական հարկեր վճարե-լու կամ էլ նման մի այլ նպատակով: Շահամիրյանի պարտամուրհակի 14-րդ հատվածում ուղղակի սուված է, որ այդ բաթաթով դրամը վերցված է մեկ տա-րի առաջ ինչ-որ պաշտոնական դրություն կամ թագավորական հրովսրտակ ստանալու համար ծախսված դրամարը մարելու նպատակով («քալթայ յինք սուած ուղամ խանելէ խալջին ջահտան այ»): Մեկ ուրիշ փաստաթղթի մեջ՝ ստորագրված 1732 թ. Սարգարի դուստր և Սարհադի կողակից Ազիզի կողմից, ասված է. «Իկրոյ մապլաղն հերանցս տանն մալ և խալջին ջահտան այ», այ-

սինքն, վերցված է այդ տիկնոջ հայրական տան պետական հարկերը վճարելու նսլատակով⁴⁷։

Ամսական 0,75 (տարեկան 9) տոկոս շահով տրվող փոխանցագրերի մեծամասնության մեջ որպես փոխառու հանդես են գալիս կանայք, որոնք պարտք են վերցնում իրենց համաքաղաքացիներից՝ վճարելու պարտականությունը փոխանցելով իրենց հարազատներին (մեծ մասամբ իրենց ամուսիններին), որոնք այդ ժամանակ առևտրական գործերով շրջագայում էին աշխարհի տարբեր ծայրերում։ Այսպիսով, պետք է ենթադրել, որ կանանց կողմից «զմէի ավաք» վերցնելու յուրաքանչյուր գործարք կատարվել է այդ մասին ընտանիքի տանուտեր տղամարդու կողմից արված գրավոր ցուցումով կամ համաձայնությունով։ Թվարկենք մի քանի փոխանցագիր՝ ստորագրված ջուղահայ կանանց կամ նրանց հանձնարարականով՝ համաքաղաքացի վաճառական կամ հոգևորական վկաների կողմից։ Մարութի կողակից Ովսանը 1746 թ. հունիսի 19-ին վերցրել է 1160 ռուփի, որը մարելու է ամուսինը Մադրասում, 5 ամիս հետո⁴⁸։ Տեր Հովհաննեսի կողակից Սաբրիխանը 1746 թ. հուլիսի 8-ին վերցրել է 81 ռուփի, պարտքը մարելու է ամուսինը 5 ամսից հետո Սեիդապատում⁴⁹։ Սուլթանումի կողակից Անամը 1747 թ. 3 նվագով 85521 ռուփի է վերցրել տարբեր մարդկանցից։ Պարտքը մարելու է ամուսինը՝ Դավութխանի որդի Սուլթանումը Բենգալիայում, «ուր և իցէ», 5 ամիս հետո և այլն⁵⁰։ Հարություն լազարյանը 1750 թ. Մոսկվայում Շահրիմանենց պարոն Հովհանջանից ստացել է 75 թուման, պայմանով, որ այդ գումարը Գիլանում գտնվող իր եղբայր Աղազարը պետք է «խասացանի պարոնին խիզանին», այսինքն՝ պետք է ուղարկի նոր Զուղա՝ Հովհանջանի կնոջը հանձնելու համար⁵¹։ Եվս մի այդպիսի գրանցում նույն մատյանի նույն էջից. «Շարիմանէնց պարոն Յարութին դի Սարհադէն ը (8) թուման գո (3000) դիան յինք առու, որ [պարոն Աղազարն Գիլանայ] խասացանի պարոնին խիզանին» և այլն։ Այստեղ փոխանցման գործողությունը հակադարձ ուղղությամբ է կատարված։ Դրամական այս տիպի փոխանցումներով հայ վաճառականները տուն էին հասցնում իրենց վաստակի մի մասը, ուստի մեծ շահով պիմում էին դրամի փոխանցման փոխադարձաբար շահավետ այդ միջոցին։ Փոխանցված գումարը որոշակի ժամկետում (այնքան ժամանակ հետո, որքան անհրաժեշտ էր դրամը մի վայրից մյուս վայրը փոխադրելու և տեղ հասցնելուց հետո անհետաձգելի գործերը կարգավորելու և բերած ապրանքը վաճառելու համար) փոխատուն կարողանում էր հասցնել փոխապահանջին առանց ճանապարհածախս վճարելու։ Փոխառու վաճառականը շահում էր այնքանով, որ նշված ժամկետում օգտագործում էր ստացված գումարը՝ շրջանառության մեջ դնելով այն իր առևտրական գործարքների մեջ։ Փոխատուն իրացնում էր այնքանով, որ նույն այդ ժամանակամիջոցում զրկվում էր այդ գումարից, այն դուրս բերելով շրջանառու իր միջոցներից։ Սակայն դրամը ապահով հասնում էր իր ընտանիքի անդամներին։

«Զմէի ավաք» կոչվող փոխանցագրի ժամկետանց լինելու դեպքում 0,75 տոկոս շահ բերող այս տարբերակը լայնորեն կիրառվում էր հայ խոջայական

47 Բրիտանական պրադարան, № 1047, էջ 18։

48 Նույն տեղում, էջ 17։

49 Նույն տեղում, էջ 61։

50 Նույն տեղում, էջ 20, 22, 24, հմտ. նաև էջ 33, 38, 143, 145, 193, 211 և այլն։

51 Հ. Լազարյանի հաշվեմատյան, էջ 75։

միջավայրում անմիջական առևտրական գործունեության հետ առնչություն չունեցող, բայց վերջին հաշվով դարձյալ տնտեսական կյանքի հետ սերտ կապված դրամական միջոցների փոխանցումների համար:

13. Բոլոր պարտամուրհակների այս հատվածում ասվում է, որ փաստաթուղթը կազմվել է երկու ճիշտ նման օրինակներից («բարաթս ք (2) դրեցի մին մազբուն»): Օրինակներից մեկը պահվել է փոխատուի մոտ, իսկ մյուսը՝ ուղարկվել ուրիշ վայրում գտնվող փոխավճարին, որը պետք է վճարումը կատարեր նշված անձնավորությանը՝ փոխապահանջին: Այնուհետև նշվում է, որ մեկ օրինակի հիման վրա վճարումը կատարելուց և այդ մասին փոխապահանջի ստորագրությունը ստանալուց հետո պարտամուրհակի մյուս օրինակը կորցնում է իր իրավական ուժը («ամնովն որ տայ՝ միւսին հուքմն բաթիլ լինի»):

15. Այս հատվածը նախատեսված էր տարեթիվն ու ամսաթիվը նշելու համար, որ արվում էր Ազարիայի թվականով (այս թվականի առաջին տարին 1616-ն է): Տոմարական այս սխեմեմը տարածված էր ոչ միայն ջուղահայերի միջավայրում, այլև այնտեղ, ուր առևտուր էին անում հայ խոջայական կապիտալի ներկայացուցիչները: Բայց կան մի շարք պարտամուրհակներ, որոնց վրա տարեթիվը գրված է և՛ Ազարիայի, և՛ հայոց մեծ տոմարի թվականով, իսկ կաթոլիկ հայերը նշում էին միայն քրիստոնեական թվականը:

16. Ամենավերջում դրվում էին վկաների ստորագրություններն ու կնիքները, ընդ որում կիրառվում էր երկու եղանակ. ա) նշվում էր, որ վկայությունը կատարվել է փոխառուի «իդրարով» (կամքով, համաձայնությամբ): Օրինակ. «Ես Սիմոնի որդի տէր Ռհանէսըս վերոյ Մատուրին եղրարովն գրեցի, վկայ եմ», «Ես Շուքուրի որդի Յովանջանըս վերոյ Մատուրին եղրարովն վկայ եմ»⁵²: բ) Ստորագրության ավելի պարզ ձևի դեպքում չէր նշվում փոխառուի համաձայնությունը: Վկան գրում էր միայն. «Գասպարի որդի Ռհաննեսըս վկայ եմ», «Սաֆարի որդի Աստուածայտուրս վկայ եմ»⁵³: Այս երկու ձևերն էլ իրավական նույն արժեքն ունեին: Կնքադրոշմը պարտադիր էր: Լոնդոնյան փաստաթղթերի վրա պահպանվել են մի քանի հարյուր համեմատաբար լավ դիտվող կնքադրոշմներ, որոնց ուսումնասիրությունը օգտակար շատ բան կարող է տալ հայ միջնադարյան կնիքագիտությանը: Հայ հոգևորականների կնիքների վրա, որպես կանոն, դրվում է նրանց անունը, եկեղեցական աստիճանը և կնիքի պատրաստման թվականը. Յ[իսուս]ի Ք[րիստոս]ի ծույ (ծառայ) Յակոբ վարդապետ, թվ. ՌՃԶ (1731)» կամ «Ք[րիստոս]ի ծառայ Գևորգ վրդպտ թվ. ՌՃՀԴ (1725)» և այլն: Վաճառականների կնիքները, առանց բացառության, սիմվոլիկ զանազան նշաններ ու պատկերներ են պարունակում, բայց չունեն գիր ու թվական (չհաշված մի երկու բացառիկ օրինակներ):

Պահպանված բազմաթիվ պարտամուրհակներից շատերը մի հատկանիշով տարբերվում են քննարկվող օրինակից. նրանցում բացակայում է դրամը վերցնելու նպատակը բացահայտող 14-րդ հատվածը: Իսկ մի քանի փոխանցագրերի մեջ, ընդհակառակը՝ հանդիպում ենք մի կետի, որը բացակայում է մեր կողմից քննարկվող պարտամուրհակում: Այդ կետը վերաբերում է այն իրավիճակին, երբ փոխավճարը անկարող է լինում կամ հրաժարվում է վճարել

⁵² Թրիտանական գրադարան, № 1047, էջ 63:

⁵³ Նույն տեղում, էջ 57:

փոխապահանջին պարտամուրհակով նախատեսված գումարը⁵⁴։ Ըստ երևույթին, փոխատուներից ոմանց պահանջով որոշ պարտամուրհակների մեջ հավելում էր կատարվում այդ մասին, իրար նմանվող այսպիսի դարձվածքով (բերում ենք մի քանի օրինակ)։

«Եթէ տէրն մի արասցէ, բարաթս նկալ առի, ես մասկուր տէր Գրիգորս (փոխառուն է—Շ. Խ.) սովղագար հասապի քարսաղին առեմ»⁵⁵։

«Եթէ աստուած մի արասցէ, տայ ոչ (փոխառու Բէկումի ամուսին Բարսեղը), նկալ առի, [բարաթս] յետ դոյ Ըսպահան, էս Բէկումս սովղագար հասարի քարսաղին առեմ»⁵⁶։

«Եթէ իմ տէր Յոհանիսիս (փոխառուն է—Շ. Խ.) մին բան պատահի, որ Մադրասն չհասանեմ. բարաթիս քարսաղին առեմ ոչ, բարաթս յետ գոյ Ըսպահան, իմ որդի Գէորգն սովղագար հասապի քարսաղին առի»⁵⁷ և այլն։

Եվ իրոք, այդպիսի դեպքեր պատահում էին։ Փոխապահանջը բավարարության չստանալով, պարտավոր էր տվյալ վայրում գտնվող վաճառականների կողմից հաստատված մի գրություն պատրաստել այդ մասին, ուղարկել նոր Զուղայի փոխառուին կամ դատական ատյանին, որպեսզի ընդունված կարգով այդ գումարը գանձվեր փոխառուից կամ նրա հարազատներից։ Պահպանվել են այդ կարգի մի քանի գրություններ, որոնք բոլորն էլ սկսվում են «Պատճառ գրոյս այս է» խոսքերով։ Դրանցից մեկում, գրված 1744 թ., էմնիազի որդի Հովհաննեսն ասում է, որ իրեն ուղարկված 220 ռուփու բարաթագրով ինքը ներկայացել է Սեիդապատում գտնվող փոխավճար պարոն Պետրոսին, վերջինս, սակայն, ասել է, որ «տալման չեմ, մազար արայ, հետ ազարկիր»։ Ըստ դրա, Հովհաննեսը խնդրել է Հնդկաստանի այդ քաղաքում հաստատված կամ այդ պահին այնտեղ գտնվող հայ վաճառականների համայնքին (չումիաթին) վկայություն տալ այդ իրողության մասին, որպեսզի «մազարս գնայ Ըսպահան հախ քր հախ դատն հասանի»։ Փաստաթղթի ստորին մասում երեք վաճառականներ վկայում են «մազարի» իսկությունը. այսպես՝ «Բարաթին փողն պարոն Պետրոսն ասաց. իմ քշտին փող չկայ, տալման չեմ, Կամանդորի որդի Մատթէոս. Բարաթին խմար պարոն Պետրոսն ասաց. ինձ հետ փող չունեք, բարաթն հետ ուղարկիր, Սաֆարի որդի Հուսէփ. Վերոյ հիշեալ բարաթին փողին հմար պարոն Պետրոսն ասաց. իմ մօտս նոցայ փող չկայ, տալման չեմ. նոջամալի որդի Սատուր»⁵⁸։

Բերենք մեկ օրինակ ևս, դարձյալ Շահամիր Շահամիրյանի հետ առնչվող։ 1745 թ. նա 450 ռուփի է վերցրել Սպահանում, պայմանով, որ Մադրասում այդ գումարը պետք է մարեն Դավութխանի որդիներ Հովհանջանն ու Մկրտումը։ Փոխապահանջ Ղազարի որդի Սեթր ներկայացել է սրանց և պահանջել վերոհիշ-

54 Այս մասին մի քանի կետեր կան «Աստրախանի հայոց Դատաստանագրքում»։ «Վասն բարաթի» գլխի 17-րդ հատվածում, օրինակ, ասված է. «Եթէ փոխավճար ոմն ի տեսանելն վրարաթագիր ի վերայ ինքեան գրեցեալ... ոչ արասցէ վճարումն բարաթին, այլ հրաժարէսցի ի առնելոյ զվճարումն և գրեսցէ ի վերոյ բարաթին, թէ այս բարաթագիրս տեսի... և ոչ արարի վճարումն, որ այսպիսի բացասութիւնն աշխարհարառիւ կոչեմք նկալ առնել. պարտաւորի փոխառուն առնել վճարումն նկալ եղեալ բարաթին՝ առանց բացառութեան» (էջ 176)։

55 Բրիտանական գրադարան, № 1047, էջ 40։

56 Նույն տեղում, էջ 193։

57 Նույն տեղում, էջ 201։

58 Նույն տեղում, էջ 43։

յալ գումարը, բայց նրանք «չուղար տվին թէ մենք պարոն Շահամրին խետ բաթայ և տալիք չունենք, տալման չեմք»: Եվ ահա, վերոհիշյալ Սեթը խնդրում է «սահիբ չումրաթից, ով որ որ մասկուր ավաքայգիին տեսել այ և պարոն Յովանջանէն, պարոն Մկրտումէն եղբար ունի, որ վկայութիւնն գրի և մոռի. որ գիրըս գնայ Ըսպահան հախ հախդարն հասանի»: Երեք վկաներ հաստատում են այս գրության ճշմարտությունը⁵⁹: Պետք չէ կասկածել, որ «նկալ արված» այդ մուրհակների փոխառուներից պահանջվել է լիովին բավարարել փոխառուներին, վճարելով նրանց ինչպես պարտք վերցրած բուն գումարը, այնպես էլ անցած ամիսների տոկոսները:

Այսպիսով, քննության առնելով այս կառգի նյութերը, որոշակի տեղեկություններ ենք ստանում դարերի ընթացքում հայ խոջայական կապիտալի միջավայրում ձևավորված դրամական փոխանցումների և վարկատվության այլ գործարքների, ինչպես նաև փաստաթղթերի ձևակերպման, օգտագործման ու կիրառման համընդհանուր ճանաչում գտած ձևերի մասին: Դրանց ուսումնասիրության ճանապարհով հնարավորություն է ստեղծվում ոչ միայն ավելի հանգամանորեն լուսաբանել խոջայական կապիտալը պատմական դերի ու նրշանակության հետ առնչվող մի շարք հարցեր, այլև ընդարձակվում են մեր գիտելիքները ուշ միջնադարյան Հայաստանի և հարևան երկրների սոցիալ-տնտեսական պատմության թիչ ուսումնասիրված որոշ երևույթների մասին:

ПЕРЕВОДНЫЙ ВЕКСЕЛЬ В СРЕДЕ АРМЯНСКОЙ ТОРГОВОЙ БУРЖУАЗИИ

Շ. Լ. ԽԱՇԻԿՅԱՆ

(Резюме)

Торговые книги, завещания и сотни других документов о различных торговых и ростовщических операциях армянских купцов XVII—XVIII вв., хранящиеся в Матенадаране им. Маштоца, Архиве внешней политики России (АВПР), Британском музее, Национальной библиотеке Лиссабона, содержат богатый материал, позволяющий обстоятельно исследовать кредитные операции армянских купцов, способы перевода денег, различные стороны деятельности торговых товариществ и т. п. Цель статьи—исследование переводного векселя (индосамента) в сфере деятельности армянского торгового капитала, охватывавшей Иран, Закавказье, Россию, Турцию, арабские страны и распространявшейся вплоть до стран Западной Европы (особенно городов Венеции и Амстердама) и Индии, Индокитая, Филиппинских островов, Индонезии.

Изучение многочисленных документов приводит к выводу, что при назначении срока получения переводной суммы принимался в расчет период времени, необходимый для отправления денег из одного места в другое, а также сверхурочные дни (чаще всего 31 день), необходимые для реализации привезенных товаров. За просроченные векселя:

⁵⁹ Նույն տեղում, էջ 296: Նման բովանդակություն ունի նաև էջ 199:

взималось 0,5% или 0,75% в месяц (соответственно 6% или 9% в год) пени, соответственно столько же прибыли получал трассат, если он раньше срока расплачивался с долгом. Прибыль (пеня) размером в 6% устанавливалась в тех случаях, когда денежные переводы производились тесно связанными между собой купцами (сегодняшний трассат становился завтра трассантом и наоборот), а прибыль размером в 9% — при переводе денег членам семьи и для личных нужд. Гораздо большим был размер пени при сделках с иностранцами. Рассматриваются также случаи, когда ремитент не получает должной суммы и вексель отправляется назад. В статье уделяется внимание и составлению отдельных частей индоссамента. Выясняется, что индоссамент в значительной мере облегчал перевод денег между разными странами, создавая широкие возможности для дальнейшего развития кредита в среде армянского торгового капитала.